

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՏԱՊԱՐՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՍԿԶԲՆԱԿՈՐՈՒՄԸ

Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման գործընթացը կարելի է պայմանականորեն բաժանել մի քանի փուլի: Միջազգային ճանաչման ու դատապարտման առաջին փուլը, ըստ էության, համընկնում է 1915–1923 թթ. հետ, որը պայմանավորված է այդ ընթացքում ընդունված միջազգային կարևոր փաստաթղթերով, որոնցում արտացոլվել է միջազգային հանրության վերաբերմունքը և գնահատականն այդ հանցագործությանը: Առաջին փուլի սկիզբ պետք է համարել Անտանտի (Համաձայնության) տերությունների 1915 թ. մայիսի 24-ի հայերի զանգվածային սպանությունները դատապարտող հռչակագիրը, իսկ ավարտը՝ 1923 թ. Լոզանի պայմանագիրը, որը Հայկական հարցի լուծումը դիտում էր լուկ Թուրքիայի փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության համատեքստում: Այս փաստաթղթերի ընդունման միջև ընկած ժամանակաշրջանում ևս եղել են միջազգային մի շարք կարևոր փաստաթղթեր, ինչպիսիք են՝ Սևրի պայմանագիրը, ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնի իրավարար վճիռը, Ազգերի լիգայի ընդունած բանաձևերը և Լոնդոնի պայմանագիրը և այլն, որոնք էլ ամբողջացնում են Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման առաջին փուլը:

Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործում 1915 թ. մայիսի 24-ի հռչակագիրն ունի առանձնահատուկ նշանակություն, քանի որ այդ փաստաթղթով Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան և Ռուսաստանը պաշտոնապես դատապարտեցին հայկական կոտորածները՝ այն որակելով որպես մարդկության

և քաղաքակրթության դեմ ուղղված հանցագործություն: Այս քայլը կարելի է համարել հայերի ցեղասպանության պաշտոնական ճանաչման առաջին փաստը և Հայոց ցեղասպանությունը դատապարտող առաջին միջազգային փաստաթուղթ¹:

Նշյալ հռչակագիրն առաջին դեպքը էր, երբ մեծ տերությունները միջամտում էին Օսմանյան կայսրության ներքին գործերին՝ քրիստոնյա փոքրամասնությունների շահերի ու իրավունքների պաշտպանության պատրվակով: Այսպիսով, մեծ տերությունները գործնականում իրականացնում էին, այսպես կոչված, մարդասիրական միջամտություն (հումանիտար ինտերվենցիա)²՝ հանդես գալով փոքրամասնությունների շահերի և իրավունքների պաշտպանության դիրքերից:

Հայ ժողովրդի իրավունքների պաշտպանության հետ կապված հումանիտար ինտերվենցիա պետք է համարել 1878 թ. Սան-Ստեֆանոյի պայմանագիրը, 1895 թ. Մալիսյան բարենորոգումների ծրագիրը, 1914 թ. հունվարի 26-ի ռուս-թուրքական համաձայնագիրը, որոնք բոլորն էլ բարենորոգումներ էին նախատեսում հայկական նահանգներում: Սակայն Օսմանյան կայսրությունը, օգտվելով իր համար նպաստավոր աշխարհաքաղաքական դասավորությունից, անընդհատ ոտնահարում էր կայսրության փոքրամասնությունների և հատկապես հայերի շահերն ու իրավունքները: Ղա հանգեցնում էր եվրոպական տերությունների կողմից նրա սուվերենության սահմանափակմանը և կայսրության ներքին գործերին միջամտելուն:

Սակայն ինչպե՞ս և ի՞նչ հանգամանքներից ելնելով մեծ տերությունները հանդես եկան նման հայտարարությամբ ար-

¹ Տե՛ս Բարսեղյան Լ. Ա., Հայոց ցեղասպանության հրապարակայնորեն դատապարտման և ճանաչման ժամանակագրություն (1915–2000 թթ.), Երևան, 2001, էջ 15:

դեն հայերի ջադերի ընթացքում և ի՞նչ քաղաքական շահեր էին հետապնդում:

Հարկ է նշել, որ 1915 թ. մայիսի 24-ի հռչակագրի նախապատրաստման փուլում կարևոր դեր խաղացին Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ V-ի հեռագրերը՝ ուղղված Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սերգեյ Սազոնովին, Իտալիայի վարչապետին և ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնին, որտեղ նա ամենայն մանրամասնությամբ ներկայացնում էր արևմտահայության վիճակը՝ հայցելով մեծ տերությունների աջակցությունը: Ակնհայտ է, որ կաթողիկոսի այս քայլերը նախապես համաձայնեցված էին ռուսական արտաքին քաղաքական գերատեսչության հետ. սոսկ կաթողիկոսի նամակները ոչինչ չէին կարող փոխել, եթե այդ քաղաքական ակցիայի հետևում կանգնած չլիներ ռուսական դիվանագիտությունը: Ռուսական գերատեսչությանը հղած հեռագիրը, որով կաթողիկոսը «մարդասիրական հովանավորություն և պաշտպանություն»² հայցում էր ռուսական դիվանագիտությանը հնարավորություն էր տալիս մեծ տերությունների առջև պաշտոնապես բարձրացնելու արևմտահայության հարցը: Այդ մասին է վկայում Ս. Սազոնովի 1915 թ. ապրիլի 9-ի թիվ 1817 հեռագիրը՝ ուղղված Կովկասի փոխարքայի օգնական Վ. Վ. Միշլասկոյն, որտեղ նախարարը նշում էր, որ Վաշինգտոնում և Հռոմում գտնվող ռուսական դեսպաններ Ն. Գիրսին և Գ. Բախմետևին հատուկ հանձնարարություն է տվել՝ պաշտպանելու Հայոց կաթողիկոս Գևորգ V-ի խնդրանքն այդ երկրների կառավարությունների առջև³:

² «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, փաստաթղթերի և նյութերի ժողովածու» Մ. Գ. Ներսիսյանի խմբագրությամբ, Երևան, 1991, էջ 337:

³ St' u "Международные отношения в эпоху империализма. Документы архивов Царского и Временного правительства, 1878-1917", серия III, т. 7, ч. 2, Москва-Ленинград, 1935, էջ 227:

Անդրադառնալով ռուսական դիվանագիտությանը նշենք, որ, անշուշտ, Ռուսաստանի քայլերը բխում էին կայսրության արտաքին քաղաքական շահերից ու հետաքրքրություններից, ինչը բնական է, սակայն կարևորն այն էր, որ Ռուսաստանի շահերը տվյալ պահին համահունչ էին ոչնչացման եզրին կանգնած հայության շահերին, ինչի արդյունքում էլ սկիզբ դրվեց հայերի զանգվածային սպանությունները դատապարտող մի շատ կարևոր միջազգային-իրավական նախաձեռնության՝ Անտանտի տերությունների 1915 թ. մայիսի 24-ի հռչակագրին:

Հռչակագրի ընդունման գործընթացն ամենևին էլ դյուրին չէր: Ռուսաստանի արտաքին գործերի նախարարությունը՝ հանձինս՝ նախարար Ս. Սազոնովի, փորձեց Անտանտի պետությունների հետ համատեղ հանդես գալ թուրքական կառավարության դեմ՝ քննադատելով Օսմանյան կայսրության վարած հայասպան քաղաքականությունը: Նման համատեղ քաղաքական ակցիան ընդգծելու էր «Համաձայնության» երկրների անխախտելի կապն ու ամուր դաշինքը:

Ապրիլի 26-ին Փարիզում և Լոնդոնում գտնվող ռուսական դեսպաններ Ա. Իզվոլսկուն և Ա. Բենկենդորֆին ուղղված հեռագրում Ս. Սազոնովը հանձնարարում էր անգլիական և ֆրանսիական կառավարություններին առաջարկել համատեղ հանդես գալ հայերի զանգվածային սպանությունները դատապարտող բողոքի նոտայով: Ռուսական դիվանագիտությունը նախատեսել էր հայտարարության նախագծի մեջ անձնապես մեղադրել օսմանյան կառավարության բոլոր անդամներին, ինչպես նաև այդ գործողություններին մասնակից դարձած քաղաքացիական և զինվորական պաշտոնյաներին: Հեռագրում Ս. Սազոնովը հիմնվում էր «հումանիտար ինտերվենցիայի» իրավունքի սկզբունքների վրա՝ հիշեցնելով 1860 թ. Եվրոպայի որդեգրած այն պատժամիջոցների մասին, որոնք հաջորդեցին

Սիրիայի կոտորածներին⁴։ Ֆրանսիական և անգլիական կառավարությունների համաձայնության դեպքում Սազոնովը նախատեսել էր միևնույն օրը բողոքի նոտան հրապարակել երեք մայրաքաղաքներում։

Օսմանյան կայսրության դեմ նախատեսվող այդ գործողության մեջ Ս. Սազոնովը նախատեսել էր ընդգրկել նաև չեզոք պետություններ ԱՄՆ-ին և Իտալիային, որոնք շարունակում էին դիվանագիտական հարաբերություններ պահպանել Օսմանյան կայսրության հետ։ Դա լավագույնս կընդգծեր իռչականագրի անկողմնակալությունը։

Վաշինգտոնում ռուսական դեսպան Ա. Բախմետևը, ստանալով Սազոնովի հրահանգները և որպես խաղաթուղթ ունենալով Գևորգ V-ի նամակը, սկսեց դիվանագիտական ակտիվ գործունեություն ծավալել ԱՄՆ-ում։ Նշենք, որ ԱՄՆ կառավարությանը ներկայացնելով Օսմանյան կայսրությունում քրիստոնյա հայ բնակչության նկատմամբ գործադրվող բռնությունների քաղաքականությունը, Բախմետևը առաջ էր քաշել հետևյալ կարևոր հանգամանքը՝ Ռուսական կայսրությունում մեծ թիվ են կազմում մահմեդականները, սակայն նրանք պաշտպանված են ու նրանց հանդեպ բռնություն չի գործադրվում⁵։

Այս քայլով Բախմետևը ցանկանում էր շեշտել այն իրականությունը, որ Օսմանյան կայսրությունը մի երկիր է, որտեղ քրիստոնյա փոքրամասնություններին պարբերաբար ոչնչացնելու քաղաքականություն է իրականացված։ Ուստի՝ մեծ տեղությունները, համաձայն «հումանիտար ինտերվենցիայի» իրավունքի սկզբունքների, պարտավոր են միջամտել և կանխել այդ հանցավոր քաղաքականությունը։ Ռուս-ամերիկյան

⁴ St' u "Русские источники о геноциде армян в Османской империи 1915–1916 годы (сборник документов и материалов)", выпуск 1, Ереван, 1995, էջ 14–15։

⁵ St' u Марукян А., Армянский вопрос и политика России (1915–1917 гг.), Ереван, 2003, էջ 71։

դիվանագիտական շփումների արդյունքը հանդիսացավ ԱՄՆ պետքարտուղար Վ. Բրայանի 1915 թ. ապրիլի 27-ի հեռագիրը՝ ուղղված Կ.Պոլսում ԱՄՆ դեսպան Հ. Մորգենթաուին՝ համաձայն որի ԱՄՆ կառավարությունը դեսպանին լիազորում էր միջամտել և ազդել թուրքական կառավարության վրա՝ հանդես գալով հայերի պաշտպանության դիրքերից: Արդեն հաջորդ օրը՝ ապրիլի 28-ին, Վաշինգտոնում ռուսական դեսպանը ստացավ Վ. Բրայանի հեռագիրը, որում նշվում էր, որ ԱՄՆ կառավարությունը հատուկ հանձնարարական է տվել Հ. Մորգենթաուին՝ կանխելու Օսմանյան կայսրությունում հայ ժողովրդի հանդեպ գործադրվող բռնություններն ու կոտորածը⁶:

Չնայած որոշակի խոստումներին՝ ԱՄՆ-ը խոսափում էր լուրջ քայլերից և Օսմանյան կայսրության վարած քաղաքականության դեմ սահմանափակվեց միայն ոչ պաշտոնական բողոքով՝ հանդես գալով հայերի պաշտպանության դիրքերից⁷:

Օսմանյան կայսրության որդեգրած քաղաքականության մասին տեղեկացվեց նաև Իտալիան, ինչի մասին վկայում է Վանում Իտալիայի հյուպատոսական գործակալի հեռագիրը՝ ուղղված Պետրոգրադում Իտալիայի դեսպանին, որում մանրամասն ներկայացնելով Վանի նահանգի վիճակը, դիվանագետը նշում էր անգամ զոհերի թիվը⁸: Չնայած իրազեկությանը՝ Իտալիան, իբրև չեզոք պետություն, որը Կ. Պոլսում ներկայացուցչություն ուներ, գործնականում ոչ մի քայլ չձեռնարկեց:

Հապաղում էին ոչ միայն չեզոք, այլև դաշնակից երկրները՝ Անգլիան և Ֆրանսիան: Իրականում թե՛ Անգլիան, թե՛ Ֆրանսիան ցանկանում էին սահմանափակվել միայն չեզոք երկրներ ԱՄՆ-ի և Իտալիայի միջոցով Օսմանյան կայսրության որդեգ-

⁶ Տե՛ս նույն տեղում:

⁷ Տե՛ս Барсегов Ю., Геноцид армян – преступление против человечества, Ереван, 1990, էջ 20:

⁸ Տե՛ս «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում», էջ 344–345:

րած քաղաքականությունը դատապարտելով: Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Տեոֆիլ Դելկասսեն ապրիլի 27-ի գիշերը հեռագրել էր Լոնդոնում գտնվող Ֆրանսիայի դեսպան Պոլ Կամբոնին՝ հանձնարարելով ճշտել անգլիական կառավարության դիրքորոշումը⁹:

Անգլիայի արտաքին գործերի նախարարությունը, ծանոթանալով հռչակագրի բովանդակությանը, հապաղում էր՝ որևէ պատասխան չտալով: Անգլիական կողմն անընդհատ ձգձգում էր, անգամ առաջ էր քաշում այն պատրվակը, թե իբր հայերը Վանում ապստամբություն են բարձրացրել, իսկ թուրքական կողմը ձեռնարկել է պատասխան գործողություններ, որոնք էլ ավարտվել են կոտորածով: Սակայն դա իրականությանը չէր համապատասխանում, և այդ մասին է վկայում նաև Սազոնովի հեռագիրը՝ ուղղված Լոնդոնում ռուսական դեսպան Բենկենդորֆին. «Կասկած չկա, որ Վանի հայերի ապստամբությունը հարուցել է կոտորածը և ոչ թե ընդհակառակը, որովհետև հայերի համար իմաստ չունեւ մինչև մեր գործերի գալը շարժում սկսել թուրքերի գերակշիռ ուժերի դեմ»¹⁰:

Ռուսաստանի արտաքին գործերի նախարարությունը չէր դադարեցնում դիվանագիտական ճնշումն Անգլիայի վրա՝ անընդհատ հարցում անելով, թե արդյո՞ք Լոնդոնը համաձայն է դաշնակից երկրների հետ համատեղ հանդես գալ բողոքի նուտայով, որը թուրքական կառավարությանը պատասխանատվություն էր սահմանելու հայերի դեմ կիրառվող բռնությունների համար: Նշված հարցադրմամբ ռուսական դիվանագիտությունը կարծես թե փակուղի էր մտցնում անգլիական բազմափորձ դիվանագիտությանը՝ նրան կանգնեցնելով բարդ ընտրության

⁹ Տե՛ս Bapceros IO., նշվ. աշխ., էջ 19: Նաև՝ Les Grandes Puissances, l'Empire Ottoman et les Arméniens dans les Archives Françaises (1914-1918). Documents réunis et présentés par A. Beylerian, Paris, 1983, N 19, p. 15.

¹⁰ «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում», էջ 340:

առջև: Լոնդոնից պատճառաբանում էին, որ այդ հռչակագիրը դրական ազդեցություն գործելու փոխարեն կարող էր հակառակ դեր ունենալ: Ավելին՝ անգլիացիները հույս չունեին, որ նման հռչակագիրն ինչ-որ բան կարող էր փոխել:

Մի կողմից Ռուսաստանի դիվանագիտական ճնշումները դաշնակիցների նկատմամբ, մյուս կողմից հայերի շարունակվող կոտորածները հռչակագրի ընդունումը դարձնում էին հրամայական: Այդ իսկ պատճառով ռուսական դիվանագիտությունը, չսպասելով որևէ պատասխանի, Փարիզում և Լոնդոնում գտնվող իր դեսպանների միջոցով մայիսի 11-ին վերոհիշյալ երկրների կառավարություններին է ներկայացնում Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սազոնովի կազմած հռչակագրի նախագծի տեքստը, որտեղ ամենայն մանրամասնությամբ ներկայացված էր Արևմտյան Հայաստանի դրությունը:

Այս փաստաթղթի կարևորությունը կայանում էր նրանում, որ մեծ տերություններն Օսմանյան կայսրությանը մեղադրում էին ոչ միայն կաստարված հանցագործության (1914–1915 թթ.), այլ նաև հայերի դեմ մինչ այդ գործած հանցագործությունների մեջ¹¹: Սա ևս մեկ անգամ գալիս է ապացուցելու այն պարզ ճշմարտությունը, որ Օսմանյան կայսրությունը մի երկիր էր, որտեղ, ռտնահարվում էին քրիստոնյա փոքրամասնությունների իրավունքները:

Հռչակագրի նախագծի տեքստին առաջինն արձագանքեց անգլիական կառավարությունը: Արտաքին գործերի նախարար Էդուարդ Գրեյը Ռուսաստանի արտգործնախարարությանը հայտնեց իր կառավարության համաձայնության և հռչակա-

¹¹ St'u Барсегов Ю., Турецкая доктрина международного права на службе политики геноцида армян (о концепции члена "Комисии Примерения" Гюндюз Актана), Москва, 2002, էջ 20:

գիրը հրապարակելու պատրաստակամության մասին, եթե ֆրանսիական կառավարությունը ևս տա իր համաձայնությունը¹²:

Ծանոթանալով հռչակագրի բովանդակությանը՝ արդեն մայիսի 20-ին ֆրանսիական կառավարությունը՝ ի դեմս արտաքին գործերի նախարար Դելկասեի, համաձայնեց Փարիզում հրապարակել հռչակագիրը՝ միայն տերմինաբանական և խմբագրական որոշակի փոփոխություններ անելուց հետո՝ կապված հանցագործության որակման հետ: Հարցը կայանում էր նրանում, որ հռչակագրի ռուսական նախագծի տեքստում եղած հանցագործության որակումը՝ «ընդդեմ քրիստոնեության և քաղաքակրթության», որը ջարդերի քաղաքականությանը տալիս էր կրոնական տեսք, ֆրանսիական կառավարության համար անընդունելի համարվեց: Այն մոտեցումը, թե այդ ոճիրները գործում են քրիստոնեության դեմ, պաշտոնական Փարիզի կարծիքով կարող էր վիրավորել Ֆրանսիայի տիրապետության տակ գտնվող ոչ քրիստոնյա բնակչության կրոնական զգացմունքները: Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարը հույս էր հայտնում, որ Սազոնովի կողմից առաջարկված բնագրի երկրորդ պարբերության «քրիստոնեության և քաղաքակրթության դեմ» բառերը կարող են առանց այլևայլության հանվել¹³: Ֆրանսիական կառավարությունն առաջ էր քաշում նաև այն թեզը, թե դրանք կարող են տեղիք տալ խորհրդածելու, թե Ֆրանսիան թուրքիային առնչվող խնդիրներում շահագրգռված է միայն քրիստոնյա բնակիչների հարցով:

¹² Տե՛ս «Русские источники о геноциде армян», էջ 27:

¹³ Տե՛ս Պելլերյան Ա., Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում (1914–1918), հատոր I, առաջաբանը՝ ժան-Բատիստ Դյուրոգելի, ֆրանս. թարգմանեց Վ. Պոլոսյանը, Երևան, 2005, էջ 96:

Չնայած նրան, որ հռչակագրի տեքստին առաջինն արձագանքել էր անգլիական կողմը, և հռչակագրի հրապարակման վերաբերյալ հայտնել էր իր պատրաստակամությունն ու այդ քայլին գնալու համար իբր թե սպասում էր ֆրանսիական կողմի արձագանքին, իրականում նա ինքն էր ձգձգում գործընթացը: Այդ մասին վկայում է Լոնդոնում ռուսական դեսպան Բենկենդորֆի 1915 թ. մայիսի 20-ի հեռագիրը՝ ուղղված Սազոնովին, որից պարզ էր դառնում անգլիական դիվանագիտության էությունը: Գրեյի այն հարցին, թե արդյո՞ք բավարար չի լինի, եթե Ռուսաստանը միայնակ հանդես գա Բարձր Ղռան դեմ, Բենկենդորֆը տալիս է շատ դիպուկ պատասխան. «մինչ այժմ մենք հանդես ենք եկել միշտ երեքով, և, որ ինձ կարևոր է թվում, որ այդ կարգը կիրառվի նաև ապագայում...»¹⁴: Նման պատասխանով Բենկենդորֆը ցանկանում էր Անգլիային հիշեցնել Ռուսաստանի առջև ունեցած իր դաշնակցային պարտավորությունների մասին: Ավելին, Բենկենդորֆը Գրեյին հիշեցնում էր խիստ կարևոր մի հանգամանք, այն, որ իրենց ռազմական հետաքրքրությունների համար նախատեսվող հռչակագիրը, անկասկած, մեծ տպավորություն կգործի ողջ հայության շրջանում, ինչն իրենց ընդհանուր շահերի համար կարևոր նշանակություն ունի¹⁵:

Անգլիական կառավարությանը ոչինչ չէր մնում, քան տեղի տալ և միանալ հռչակագրին: Մայիսի 21-ին անգլիական կողմը Փարիզին տվեց իր դրական պատասխանը: Էդուարդ Գրեյը, համաձայնելով Դելկասեի արած առաջարկին, առաջարկում էր Թուրքիայում հայերի կոտորածներին վերաբերող հաղորդագրության հրապարակման ամսաթիվ ընդունել մայիսի 24-ը:

¹⁴ «Ռուսաստանի Արտաքին գործերի նախարարության փաստաթղթերը Հայոց 1915–1916 թթ. ցեղասպանության մասին», կազմող, առաջաբանի, թարգմանության հեղինակ՝ Ա. Մարուքյան, Երևան, 2001, էջ 27:

¹⁵ Տե՛ս «Русские источники о геноциде армян», էջ 28:

Ֆրանսիայի և Անգլիայի մոտեցումը՝ կապված տեքստի փոփոխության հետ, Սազոնովի կողմից հավանության արժանանացավ: Ռուսական կողմը հայտնեց իր համաձայնությունը «քրիստոնեության և քաղաքակրթության դեմ» ձևակերպումը փոխարինել «մարդկության և քաղաքակրթության դեմ» տարբերակով և ընդառաջեց նաև Գրեյի ցանկությանը՝ «հայերի կոտորածներ»-ը փոխարինել «համանման կոտորածներ» բառերով¹⁶:

Նախատեսված օրը՝ մայիսի 24-ին, երեք մայրաքաղաքներում՝ Սանկտ-Պետերբուրգում, Փարիզում և Լոնդոնում հռչակագրի հրապարակվելուց հետո փաստաթղթի ֆրանսերեն տեքստը հանձնվեց «Հավա» հեռագրական գործակալությանն ու անմիջապես փոխանցվեց Կոստանդնուպոլիս և Բեռլին¹⁷: Քանի որ Անտանտի երկրների և Թուրքիայի միջև դիվանագիտական հարաբերություններ չկային, թուրքական կողմին հայտարարագրի պաշտոնական հանձնումն Անտանտի երկրների անմիջական մասնակցությամբ ուղղակի հնարավոր չէր, ուստի ֆրանսիական կողմը հռչակագրի տեքստը ներկայացրեց Ֆրանսիայում ԱՄՆ-ի դեսպան Վ. Շարփին: Նրա միջոցով հռչակագիրը պետք է ներկայացվեր ԱՄՆ-ի կառավարությանը՝ Օսմանյան կայսրության վարչապետ Սայիդ Հալիմ փաշային փոխանցելու նպատակով: Մայիսի 28-ին Շարփը հռչակագրի պատճենը փոխանցեց Վաշինգտոն՝ պետքարտուղար Վ. Բրայանին, իսկ վերջինս մայիսի 29-ին այն հեռագրով ուղարկեց Կ. Պոլսում ԱՄՆ դեսպան Հ. Մորգենթաուին, որը և այն հանձնեց հասցեատիրոջը:

¹⁶ Տե՛ս Պեյլերյան Ա., նշվ. աշխ., էջ 99:

¹⁷ Տե՛ս Սաֆրաստյան Ռ. Ա., Օսմանյան կայսրություն. ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876–1920 թթ.), Երևան, 2009, էջ 174:

Չնայած նրան, որ Անտանտի երկրների հռչակագիրը հարուցեց թուրքական կառավարության և հատկապես Սայիդ Հալիմ փաշայի զայրույթը, սակայն իրականում այդ փաստաթուղթը ոչ մի ազդեցություն չգործեց օսմանյան կառավարության վրա: Ավելին, երիտթուրքական կառավարությունը ոչ միայն չընդունեց մեղադրանքները՝ նշելով, որ «հայերի դեմ գործադրված ջարդերի որևէ դեպք չկա և տերությունների զրպարտությունները բացահայտ սուտ են»¹⁸, շարունակեց իր հայաջինջ քաղաքականությունը, այլև ինքը պատասխան նոտայով կասկածի տակ դրեց Անտանտի «մարդասիրական» ձգտումներն ու «քաղաքակիրթ» դիմագիծը: Օսմանյան կայսրության վրա ոչ մի ազդեցություն չգործեցին նաև չեզոք պետությունների «ներգործությունները», որոնք անարդյունավետ էին և ոչ մի կերպ չնպաստեցին ցեղասպանության քաղաքականության դադարեցմանը¹⁹:

Անտանտի երկրները նշյալ հռչակագրով հետապնդում էին քաղաքական որոշ նպատակներ: Տերությունների համար իրականում առաջնային էր հռչակագրի քաղաքական նշանակությունը, այն է՝ օգտագործելով Հայկական հարցը, փորձել ճնշում գործադրել Օսմանյան կայսրության վրա և սպառնալ հետպատերազմյան հաշվեհարդարով: Եթե այդ կերպ հաջողվեր կայսրությանը պատերազմից դուրս բերել, ապա Գերմանիան կգրկվեր իր դաշնակցի օժանդակությունից, ինչը համեմատաբար կհեշտացներ Անտանտի հաղթանակը: Մյուս կողմից՝ Անտանտի տերություններին հետաքրքրում էր բուն Օսմանյան կայսրությունը, որտեղ նրանցից յուրաքանչյուրը ցանկանում էր

¹⁸ Պողոսյան Ս. Կ., Պողոսյան Կ. Ս., Թուրքերը թուրքերի մասին, վավերագրերի և նյութերի ժողովածու, Երևան, 2000, էջ 200:

¹⁹ Տե՛ս Եսայան Ա., «Հայկական հարցը» և միջազգային դիվանագիտությունը, Երևան, 1965, էջ 61:

իր ազդեցության գոտին հաստատել (հետագայում դա արտացոլվեց 1916 թ. Սայքս-Պիկոյի համաձայնագրում):

Այն, որ Անտանտի տերություններն առաջնային պլան էին մղում քաղաքական շահը և իրականում կարևորում հռչակագրի ոչ այնքան իրավական, որքան քաղաքական կողմը, դա փաստ է, սակայն չմոռանանք, որ մայիսի 24-ի նոտան կազմվեց մի ժամանակաշրջանում, երբ ընթանում էր Առաջին աշխարհամարտը և երկու հակադիր խմբավորումների հաղթանակի հետ կապված կանխատեսումներ անելն ուղղակի հնարավոր չէր: Դա շատ լավ գիտակցում էին նաև Անտանտի երկրները՝ քաջ իմանալով, որ օսմանյան կառավարության վրա հռչակագիրն ազդեցություն չէր գործելու: Ուստի կարելի է եզրակացնել, որ մայիսի 24-ի հայտարարությամբ Անտանտը գործնականում հետապնդում էր այլ նպատակ՝ քրիստոնյա փոքրամասնությունների, մասնավորապես հայերի (չմոռանանք, որ Անտանտի երկրներից Ռուսաստանի զինված ուժերում փոքր թիվ չէին կազմում հայերը) և միջազգային հանրության մոտ բարձրացնել Անտանտի հեղինակությունը՝ ի ցույց դնելով Քառյակ դաշինքի հակամարդկային դիմագիծը:

Եթե Անտանտի տերությունների համար մայիսի 24-ի հռչակագիրն իրականում սոսկ միջոց էր Օսմանյան կայսրության գլխին մտրակ թափահարելու համար, ապա ցեղասպանության ենթարկված հայ ժողովրդի համար կարևոր էր հռչակագրի ոչ թե քաղաքական, այլ բարոյական և իրավական կողմը, որով դատապարտվում էր իր նկատմամբ կատարվող բռնությունները: Իրավական տեսանկյունից հռչակագրի կարևորությունը կայանում էր նրանում, որ հենց հանցագործության պահին Անտանտի տերություններն արձագանքեցին երիտթուրքական կառավարության վարած հայաջինջ քաղաքականությանը՝ որպես միջազգային իրավունքում գործող նոր-

մերի կոպիտ խախտում՝ այն որակելով որպես ոչ միայն հայ ժողովրդի, այլև «մարդկության և քաղաքակրթության դեմ» ուղղված հանցագործություն: Հռչակագրի հիմքում ընկած էին Հաագայի 1899 թ. և 1907 թ. խաղաղության կոնֆերանսների արդյունքում ընդունված «Պատերազմ վարելու օրենքների և սովորույթների մասին» կոնվենցիաների դրույթները:

Այս փաստաթղթի կարևորությունը և առանձնահատկությունը կայանում է ոչ միայն նրանում, որ այն Հայոց ցեղասպանության պաշտոնական ճանաչման ու դատապարտման միջազգային առաջին վավերագիրն է, այլև որ այն պայքարի հիմք հանդիսացավ նման տեսակի հանցագործության դեմ: Բնավ պատահական չէր, որ ցեղասպանության հանցագործության նշված ձևակերպումը՝ «հանցագործություն՝ ուղղված մարդկության դեմ», հետագայում արտացոլվեց նաև ՄԱԿ-ի 1948 թ. դեկտեմբերի 9-ի «Ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժի մասին» կոնվենցիայի տեքստում, ինչը վկայում է այն մասին, որ Հայոց ցեղասպանությունը հանդիսացել է տվյալ հանցագործության առաջին օրինակը, որը հիմք է ծառայել միջազգային իրավունքում ցեղասպանության հանցագործության սահմանման ու պատժելիության համար:

МАНЕ КОНИНЯН

ЗАРОЖДЕНИЕ ПРОЦЕССА МЕЖДУНАРОДНОГО ОСУЖДЕНИЯ ГЕНОЦИДА АРМЯН

РЕЗЮМЕ

24 мая 1915 года державы Антанты – Россия, Англия и Франция, совместной декларацией осудили политику младоту-

рецкого правительства, направленную на массовое истребление армянского населения Османской империи, квалифицируя ее как "преступление против человечества и цивилизации".

Данный документ имеет не только политическое, но и международно-правовое значение, поскольку квалификация Геноцида армян – как "преступление против человечества", впоследствии именно так и была отражена в тексте Конвенции ООН "О предупреждении преступления геноцида и наказания за него" от 9 декабря 1948 года.

MANE KONINYAN

THE BEGINNING OF THE PROCESS OF INTERNATIONAL CONDEMNATION OF THE ARMENIAN GENOCIDE

SUMMARY

May 24, 1915, at the time of the crime, the Entente powers - Russia, Britain and France, joint declaration condemned the Young Turk government policies aimed at the mass extermination of the Armenian population of the Ottoman Empire, classifying it as a "crime against humanity and civilization".

This document has not only political, but also international legal significance because qualifies the Armenian Genocide as a "crime against humanity" Subsequently it was also reflected in the text of the UN Convention "On the Prevention and Punishment" on December 9, 1948.